ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/33

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով Դավիթ Թովմասյանի 27.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Դավիթ Թովմասյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Դավիթ Թովմասյանը 27.02.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար ս/թ փետրվարի 15-ին հայտարարել է Արամուսի համայնքապետարանի կարիքների համար աղբատար ավտոմեքենայի ձեռք բերման գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 22.02.2018թ.:

Հայտեր են ներկայացրել Լենա Սամվելի Համբարձումյան Ֆ/Ա-ն, «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն և Գրիգոր Բաբայան ԱՁ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2018թ. կայացած նիստի N 2 Արձանագրության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն:

Սակայն գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է կասեցվեր նիստը մեկ աշխատանքային օրով, «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ից պահանջվեր, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերջինս շտկեր իր կողմից թույլ տված անհամապատասխանությունը: Մասնավորապես «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում ընթացակարգի ծածկագիրը գրված է սխալ:

Գտնում եմ, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»:

Ի լրումն 27.02.2018թ. ներկայացված բողոքի Դավիթ Թովմասյանը 14.03.2018թ. Խորհրդին է ներկայացրել բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար ս/թ փետրվարի 15-ին հայտարարել է Արամուսի համայնքապետարանի կարիքների համար աղբատար ավտոմեքենայի ձեռք բերման գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 22.02.2018թ.:

Հայտեր են ներկայացրել Լենա Սամվելի Համբարձումյան ֆ/ա-ն, «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն և Գրիգոր Բաբայան ԱՁ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2018թ.-ի կայացած նիստի N 2 Արձանագրության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն:

Իմ նախկին բողոքով պահանջել էի, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կասեցվեր նիստը մեկ աշխատանքային օրով, «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ից պահանջվեր, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերջինս շտկեր իր կողմից թույլ տրված անհամապատասխանությունը:

Սակայն գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ տուժանքի մասին համաձայնագրի մեջ գրված է սխալ ծածկագիր՝ մասնավորապես ՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/2:

Ավելին գտնում եմ, որ պետք է չեղյալ համարվի Արամուսի համայնքապետարանի կարիքների համար աղբատար ավտոմեքենայի ձեռքբերման գնանշման հարցման ՀՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգը, քանի որ ընթացակարգի հրավերի մեջ սահմանված է, որ.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին , որը նշանակում է, որ վերոհիշյալ աղբատար մեքենայի գնման համար բյուջեյով նախատեսված է մինչև 5.000.000 ՀՀ դրամ:

Սակայն 02.26.2018թ. ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի համայնքապետարանի 2018թ. փոփոխված գնումների պլանի մեջ, որպես նշված ավտոմեքենայի նախահաշվային գին նշված է 6.000.000 ՀՀ դրամ: Դա նշանակում է, որ հանձաժողովը պետք է պահանջեր հետևյալը.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը կամ (պայմանագրերը) գնահատվում է կամ (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա դրանց շրջանակներում մատակարարված

ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում աղբատար ավտոմեքենայի մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներն իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ծամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավասումը: Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվուում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:»:

Դավիթ Թովմասյանը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

Կիրառել ժամանակավոր միջոց, չեղյալ համարել Արամուսի համայնքապետարանի կարիքների համար աղբատար ավտոմեքենայի ձեռքբերման գնանշման հարցման ՀՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ 18/2 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 22.02.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը: Չեղյալ համարել «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու որոշումը և մերժել «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Չեղյալ համարել Արամուսի համայնքապետարանի կարիքների համար աղբատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման ՀՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ 18/2 ծածկագրով ընթացակարգը:

Դավիթ Թովմասյանը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նիստերին չի ներկայացել:

2. **<u>Արամուսի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Արամուսի համայնքապետարանը 07.03.2018թ. թիվ 79 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Արամուսի համյանքապետարանի կողմից ՀՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ 18/2 ծածկագրով հայտարարվել է գնանշման հարցում՝ աղբատար մեքենայի ձեռք բերման նպատակով: Մեր կողմից հրապարակված հրավերի N 1 հավելվածում ծածկագրի «ՀՀ» տառերը նշված չեն եղել, որի արդյունքում «Դառես» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ, որը համապատասխանում է հայտարարության հետ: Հայտերի բացման նիստում «Դառես» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին 2018 թվականի փետրվարի 23-ին ուղարկվել է համապատասխան ծանուցում, որպեսզի եռօրյա ժամկետում ներկայացնի համապատասխան փաստաթղթեր: Սակայն 2018 թվականի փետրվարի 27-ին Դավիթ Թովմասյանի կողմից բողոքարկման խորհրդին է ներկայացվել դիմում-բողոք: Հարկ ենք համարում նշել, որ բողոքը ներկայացնող անձը՝ Դավիթ Թովմասյանը «Դառես» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձն է, ով ներկայացրել է հայտը և ներկա է գտնվել հայտերի բացման նիստին: Մեր համոզմամբ նման երևույթը նպատակ ունի մեխանիկորեն երկարաձգելու գնման գործընթացը, որի արդյունքում համայնքում տեղի են ունենում բողոքներ՝ աղբահանությունը չիրականացնելու պատճառով:

Քննարկումների արդյունքում ունենք կասկածներ, որ հաղթող մասնակիցը՝ «Դառես» ՍՊԸ-ն չունի համապատասխան տեխնիկա՝ համայնքին ներկայացնելու համար: Համայնքում շուրջ 2 ամիս չի իրականացվում աղբահանություն, որի պատճառով համայնքում առաջացել է հակասանիտարական վիճակ, ինչը պատճառ է հանդիսացել բնակչության դժգոհությունների և բողոքների, ընդհուպ մինչև դիմում-բողոքների՝ կառավարությանը:»:

Խորհրդում անցկացվող նիստերին մասնակցում էին Արամուս համայնքի ներկայացուցիչներ Հրաչյա Վարդանյանը և Ռաֆիկ Խաչատրյանը:

3. **<u>ԳԲԽ-ԷՍ-2018/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է Դավիթ Թովմասյանի 27.02.2018թ. ներկայացրած բողոքն ու կից փաստաթղթերը և 14.03.2018թ. ներկայացրած բողոքի լրացումը, Արամուսի

համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 07.03.2018թ. թիվ 79 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ 18/2 ծածկագրով բաց մրցույթ հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ 18/2 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.02.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը, «Դառես» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

Արամուսի համայնքապետարանի կարիքների համար՝ աղբատար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ 18/2 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Դառես» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 22.02.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով որոշել է «Դառես» ՍՊԸ-ին ճանաչել ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Դավիթ Թովմասյանը Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Դառես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում ընթացակարգի ծածկագիրը գրված է սխալ և գտնում է, որ Հանձնաժողովի կողմից նիստը պետք է կասեցվեր մեկ աշխատանքային օրով, «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ից պահանջվեր, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերջինս շտկեր իր կողմից թույլ տրված անհամապատասխանությունը:

Բողոքաբերը հայտնել է նաև, որ գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր «ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ տուժանքի մասին համաձայնագրի մեջ ընթացակարգի ծածկագիրը սխալ է գրված:

Բողոքի քննության նպատակով 02.03.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ ծածկագրի «ՀՀ» տառերը Հրավերի N 1 հավելվածում նշված չեն եղել, հետևաբար «Դառես» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրված N 1 հավելվածը համապատասխանում է Հրավերի պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին կետի՝

- 8-րդ ենթակետի համաձայն՝ հայտը՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է,

- 9-րդ ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

• 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Խորհուրդն արձանագրում է, որ «Դառես» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած N 1 հավելվածը համապատասխանում է Հրավերի պահանջներին:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Դառես» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած տուժանքի մասին համաձայնագրում ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/2», փոխարեն նշված է «ՀԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/2»:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Դառես» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած հայտի ապահովումը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելով և վերջինիս ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է Բողոքով՝ Հրավերի պայմաններում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացված իրավական հիմքերին և փաստական հանգամանքներին, Խորհուրդը՝ ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներով, չի անդրադառնում դրանց քննարկմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դավիթ Թովմասյանի 27.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ՀՀ ԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ 18/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Դառես» ՍՊԸ-ին ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ